ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-568-25.04.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 5-րդ մասում «դատախազների,» բառից հետո լրացնել «քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց,» բառերը:

Հոդված 2. Օրենքի 14.2-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսի չափով:»:

Հոդված 3. Օրենքի 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

«1. «Քննչական կոմիտեի նախագահ 12.00» պարբերությունում՝ «12.00» թիվը փոխարինել «14.50» թվով.

2. «Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ 8.50» պարբերությունում՝ «8.50» թիվը փոխարինել «14.00» թվով»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունիսի 1-ից:

Կ-568-25.04.2023-ՊԻ-011/1

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ~~ԼՐԱՑՈՒՄՆԵՐ~~ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 5-րդ մասում «դատախազների,» բառից հետո լրացնել «քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց,» բառերը:

Հոդված 2. Օրենքի 14.2-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել ~~հետևյալ~~ նոր խմբագրությամբ.

«5. Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսի չափով:»:

Հոդված 3. Օրենքի 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

«1. «Քննչական կոմիտեի նախագահ 12.00» պարբերությունում՝ «12.00» թիվը փոխարինել «14.50» թվով.

2. «Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ 8.50» պարբերությունում՝ «8.50» թիվը փոխարինել «14.00» թվով»:

Հոդված ~~3~~4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունիսի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-568-25.04.2023-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	**Կառավարություն**	Նախագծի վերնագիր	1.Հաշվի առնելով, որ Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում կատարել լրացում, իսկ Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է օրենքի 14.2-րդ հոդվածի 5-րդ մասում՝ փոփոխություն: Ուստի առաջարկում ենք Նախագծի վերնագրում	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			«ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ «1. Նորմատիվ իրավական ակտը ունենում է վերնագիր, որը համապատասխանում է նորմատիվ իրավական ակտի բովանդակությանը:»:		
2.	**Կառավարություն**	Նախագծի 2-րդ հոդված	Առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածում «շարադրել հետեւյալ խմբագրությամբ» ձեւակերպումը փոխարինել «շարադրել նոր խմբագրությամբ» ձեւակերպմամբ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, այն է՝ «1. Նորմատիվ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են նրա առանձին՝ 3) բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, ենթակետեր, պարբերություններ կամ	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով.»:		
3.	**Կառավարություն**	Նախագիծը լրացնել նոր՝ 3-րդ հոդվածով	Առաջարկում ենք Նախագիծը լրացնել նոր 3-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «***Հոդված 3.*** Օրենքի 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները. 1. «Քննչական կոմիտեի նախագահ 12.00» պարբերությունում՝ «12.00» թիվը փոխարինել «14.50» թվով. 2. «Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, զինվորական քննչական գլխավոր վարչության պետ 8.50» պարբերությունում՝ «8.50» թիվը փոխարինել «14.00» թվով»: Փոփոխության նպատակն է Քննչական կոմիտեի նախագահի և նախագահի տեղակալների վարձատրության պաշտոնային դրույքաչափերի հավասարեցումն է համապատասխանաբար՝ Հակակոռուպցիոն կոմիտեի	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			նախագահի և Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալների պաշտոնային դրույքաչափերին՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադևության 178-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի բ6-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ և 20-րդ կետերը, Սահմանադրական դատարանի՝ 12.02.2019թ.-ի ՍԴՈ-1443 որոշումը:		